ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՆԻ ԳԱՐԵԳԻՆԻ

# ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ.01.07 – «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Առաքելյան Արա Հրաչիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր **Գայանե Վիուլի Եղիազարյան**

բանասիրական գիտությունների թեկնածու **Հեղինե Սարկիսի Թումանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հուլիսի 7-ին՝ ժամը $14^{30}$-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲԿԳԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 420 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ն. Կ. Գոնչար-Խանջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության **առարկան** XX դարի ամերիկացի նշանավոր թատերագիր *Մարվին Նիլ Սայմոնի* (1927-2018) դրամատուրգիայի ժանրային, թեմատիկ առանձնահատկությունների և դրամատիկական «նոր լեզվի» ուսումնասիրությունն է: Այս գրողը նոր շունչ հաղորդեց ժամանակակից ամերիկյան թատրոնին՝ այն հարստացնելով ստեղծագործական նոր մոտեցումներով և նոր հայեցակարգերով:

Որպես բազմամշակույթ հասարակությունների հանգրվան՝ ԱՄՆ-ը հնարավորություն ընձեռեց բազմաթիվ ազգերին, այդ թվում՝ նաև հրեա ժողովրդին XX դարում ապաստանելու իր երկրում և ստեղծելու բազմամյա արժեքավոր մշակույթ: Ամերիկայում ձևավորված բազմազգ և բազմամշակույթ հասարակության յուրաքանչյուր համայնք, ամեն մի գաղթօջախ, ինչպես նաև հրեա-ամերիկյանը, սկզբնապես ոչ միայն ձգտում էր պահպանել սեփական ինքնության ազգային արժեքները, այլև դրանք ձուլում էր արդեն ձևավորված ամերիկյան հասարակությանը, որն սկզբնավորման շրջանում ամերիկացիներն անվանում էին «հալոցքի կաթսա» (melting pot): Սակայն ժամանակի ընթացքում, ինչպես նկատելի է Նիլ Սայմոնի պիեսներում, ազգային այդ միավորումները որոշակի չափով աստիճանաբար կորցնում են իրենց ազգային ինքնության դիմապատկերը: Դա է պատճառը, որ հեղինակը փորձում է սուր ծաղրի և հումորի միջոցով ներկայացնել Ամերիկայում բնակվող ազգային միավորումների և առաջին հերթին հրեա հասարակության իրավիճակը՝ ակնկալելով, որ սև հումորն ու երգիծանքը կարող են էական ազդեցություն ունենալ նրանց ազգային մտածողության վրա:

Աշխատության հիմնական **օբյեկտն** են «*Տարօրինակ զույգ*», «*Զբոսայգում՝ ոտաբոբիկ*», «*Արևի տղաները*», «*Համար՝ կալիֆոռնիական հյուրանոցում*», «*Ես պիտի նկարահանվեմ*», «*Յոնքերսում մոլորվածները*» և այլ պիեսները: Դրանցում առավելապես տեսանելի են ամերիկյան հասարակությանը ձուլվելու միտում ունեցող երիտասարդների կերպարները, որոնք միանշանակ տարված են ամերիկյան երազանքով և որին ձգտում են հասնել ցանկացած գնով:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է առաջադրված թեմայի համամարդկային, ավելին՝ վերժամանակյա բնույթի կարևորությամբ, նաև ընտրված պիեսներում դրանց դրսևորման գաղափարական և գեղարվեստական ակնառու արժանիքներով: Նիլ Սայմոնի գրեթե բոլոր պիեսներում հանդիպում ենք սարկաստիկ կերպարների, որոնց գործողությունների հիման վրա էլ կառուցվում են կատակերգությունների գաղափարական հիմնական բովանդակությունը և դրանց ատաղձը կազմող հումորն ու երգիծանքը: Խնդրո առարկա պիեսներն արտահայտում են համամարդկային արժեքներ ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հին ու նոր սերունդների կապի խաթարվածությունը, երիտասարդ մարդկանց չիրականացած երազանքներն ու նպատակները, որոնք ամենևին կապ չունեն իրենց ինքնության արտահայտման հետ: Նրանք այլևս ի-

րենց համարում են ամերիկացի կամ աշխարհաքաղաքացի և կազմում են համայն աշխարհի համածուլվածքը:

## ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թեև ամերիկացի և ընդհանրապես արտասահմանցի որոշ գրականագետներ ուսումնասիրել են Նիլ Սայմոնի երկերը, բացահայտել դրանց գաղափարական ու գեղարվեստական բազմաթիվ արժանիքները[1], այնուամենայնիվ մեզ գրեթե ժամանակակից և համաշխարհային ճանաչման արժանացած գրողի դրամատուրգիայի ժանրային ու թեմատիկ առանձնահատկություններին անդրադարձել են հպանցիկորեն, այլևայլ հիմնախնդիրների առիթով: Եվ սույն ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ գրականագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն՝ մեկ աշխատանքի շրջանակում, հատուկ ուսումնասիրության նյութ է դարձել խնդրո առարկան, առհասարակ Սայմոնի երգիծանքի դրսևորումը՝ կապված ինչպես Ամերիկայում ապրող տարբեր ազգությունների, այնպես էլ համամարդկային խնդիրների հետ: Բացի այդ՝ հետազոտության մեջ փորձ է արվել քննության ենթարկել գրողի դրամատիկական երկերում առկա այնպիսի կարևոր, սակայն քիչ ուսումնասիրված խնդիրներ, ինչպիսիք են ազգայինի և համամարդկայինի համադրումը, դրանց հարաբերակցությունները տարբեր հարթությունների մակարդակով՝ հասարակական, հոգեբանական, ընտանեկան, միջանձնային և այլն:

Նիլ Սայմոն դրամատուրգի ստեղծագործական առանձնահատկություններից մեկն այն է, որ նա կարողանում է ներկայացնել ազգային հարցերին և ազգային ինքնությանը վերաբերող (այդ թվում՝ նաև հրեաների) ոչ միայն դրական, այլև բացասական կողմերը և այդ ամենը կատարում է նուրբ, սակայն շեշտադրված երգիծանքով: Գեղարվեստական գրականության միջոցով, մասնավորապես կյանքի և իրականության երևույթների նկատմամբ անողոք ծաղրն օգտագործելով՝ առաջ են քաշվում ազգային ինքնությանն առնչվող գոյաբանական և գոյապահպանման հարցեր, որոնք ենթադրում են պահպանել սեփական ազգի արժեքաբանությունն ու մշակույթը, ավանդույթները և կրոնական ծեսերը: Իսկ ահա ուրիշ հասարակությանը ձուլվող ժողովուրդը չի կարող պահպանել իր ազգային նկարագիրն ու դիմապատկերը, ինչպես նաև դժվարություն կառաջանա պահպանել սեփական լեզուն, մշակույթն ու կրոնը:

[1] Տե՛ս Hartnoll, Phyllis & Found, Peter, eds. (1996). "Simon, (Marvin) Neil". The Concise Oxford Companion to Theatre. Oxford University Press. Retrieved October 18, 2011, "About Neil Simon". American Masters. PBS. November 3, 2000, Isherwood, Charles (August 26, 2018). "Neil Simon, a Master of Comedy on Broadway and Beyond, Is Dead at 91". The New York Times. Retrieved August 26, 2018, Gardner, Elysa (August 26, 2018). "America's playwright Neil Simon, who wrote 'The Odd Couple' and 'Sweet Charity,' has died". USA Today. Retrieved August 27.

Ատենախոսության գիտական նորույթներից մեկն էլ Նիլ Սայմոնի պիեսներում կարևորագույն տեղ հատկացվող *երկընտրանքի* վերհանումն է. իր երկերում հեղինակը քննարկում է ոչ թե իրավիճակը, այլ դրա այլընտրանքային լինելը, իմպլիցիտ կերպով ակնարկում դրանց այլընտրանքային հնարավորությունները: Այս առումով սա Նիլ Սայմոնի կողմից կատարված *նորարարություններից* էր, որն առաջ է քաշում բոլորովին նոր հայեցակարգեր և մոտեցումներ թատերական աշխարհում:

Աշխատանքի հիմնական **նպատակը**, հարկավ, խնդրո առարկա պիեսների թեմատիկ և ժանրային առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունն է, որը ենթադրել է թեմայի բացահայտման տրամաբանությունից ելնող զանազան **խնդիրների** առաջադրումներ, որոնցից նշելի են հետևյալները՝

- բացահայտել պիեսներում առկա երգիծանքի դրսևորումը՝ կապված ինչպես Ամերիկայում ապրող տարբեր ազգությունների, այնպես էլ համամարդկային խնդիրների հետ,
- ներկայացնել ազգայինի և համամարդկայինի համադրումը, դրանց հարաբերակցությունները տարբեր հարթությունների մակարդակով՝ հասարակական, հոգեբանական, միջանձնական, ընտանեկան և այլն,
- վեր հանել Նիլ Սայմոնի պիեսներում էական տեղ ու դեր ունեցող երկընտրանքի էությունը,
- բնութագրել դրամատուրգի՝ թատերական աշխարհում բոլորովին նոր հայեցակարգերի և մոտեցումների էությունը,
- բացահայտել պիեսների կոմպոզիցիոն յուրահատկությունները (գիտակցված տեմպ և արագընթաց գործողություններ, ոչ դանդաղ քայլերի հաջորդականություն...),
- համակողմանի վերլուծել կերպարային համակարգը և հարակից բազմաթիվ հարցեր:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքը կատարվել է մի շարք **մեթոդների**՝ համեմատական, պատմական, վերլուծական, հոգեբանական, կիրառմամբ: Բայց և այնպես՝ ուսումնասիրության մեջ տիրապետող է պատմահամեմատական մեթոդը՝ ելնելով խնդրո առարկայի բնույթից: Այն ըստ հարկի ներառում է ոչ միայն Սայմոնի կենսագրական, ստեղծագործական ուղու ներկայացումը, այլ նաև ամերիկյան բազմազգ հասարակության ձևավորման պատմական ընթացքը, հրեա-ամերիկյան գրականության պատմահամեմատական զարգացման շրջափուլը և, իհարկե, այդ հասարակության և գրականության արժևորումը ամերիկյան իրականության մեջ:

Կարևորվել է նաև քննադատական գրականության վերլուծությունը, որն օգտագործվել է ատենախոսության ուսումնասիրման մեթոդաբանության մեջ:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել համաշխարհային ժամանակակից դրամատուրգիային նվիրված գիտատեսական աշխատություններում: Այն կարող է շահեկան լինել նաև հայ ժամանակակից դրամատուրգների պիեսների ներկայացման ու մեկնաբանման համար:

Հետազոտությունն ունի գործնական նշանակություն. կարող է օգտագործվել արտասահմանյան գրականության դասախոսություններում և դառնալ գիտատեսական նոր ընդհանրացումներ կատարելու ուշագրավ ազդակ:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կատարվել է Երևանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են ՀՀ և միջազգային պարբերականներում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Ներածության** մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքը և կիրառվող մեթոդները, ինչպես նաև ներկայացված են խնդիրները, նպատակները, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, կառուցվածքն ու ծավալը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
## ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀՐԵԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության երեք գլուխներում համեմատական մեթոդով քննվել են Նիլ Սայմոնի խնդրո առարկա պիեսների կերպարների առանցքային կապվածությունն ազգային ու համամարդկային արժեքներին և միաժամանակ հեռացումը դրանցից: Ուսումնասիրվել են ոչ միայն պիեսների կենտրոնական կերպարներն ու նրանց բարոյահոգեբանական դրսևորումները հանրության մեջ, այլ նաև ներանձնային փոխհարաբերությունները թե՛ ընտանիքում և թե՛ ընկերական ու սոցիալ-հասարակական միջավայրում:

Պատմական էքսկուրսի միջոցով ծանոթագրություններ են տրվում Ամերիկայում նախ՝ բազմազգ ու բազմամշակույթ հասարակության, ապա՝ հրեա-ամերիկյան գրականության պատմական ձևավորման ու զարգացման վերաբերյալ, որի տարածմամբ և զարգացմամբ բացվեցին ակադեմիական բազմաթիվ հնա-

րավորություններ: Խառնածին գրականության միջոցով հրեա հեղինակները լավագույնս ներկայացրին իրենց ժողովրդի անցած պատմամշակութային, կրթական և սոցիալ–հասարակական դժվարին ճանապարհն ու լույսի այն հանգրվանը, որտեղ, չնայած ինքնության պահպանման մի շարք խոչընդոտներին, կարողացան արարել ու ստեղծագործել բոլորովին նոր հայեցակարգերով. դրանց մատակարարը, անշուշտ, Ամերակայի Միացյալ Նահանգներն էր:

Աշխատանքի **առաջին գլխում**՝ «*Նիլ Սայմոնի դրամապուրգիայի կայացումը* հրեա-ամերիկյան գրականության համատեքստում», քննության է առնվել XX դարի երկրորդ կեսում Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաստատված բազմամշակութային գրականության հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև այդ համատեքստում հրեա-ամերիկյան մշակույթի զարգացման հիմնական միտումները: Զանց չեն առնվել նաև մինչև XX դարը գոյություն ունեցող Սեֆարդիկ հրեաների, ինչպես նաև Իդիշ գրականության մասին մի շարք ուսումնասիրություններ և հետազոտություններ:

Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև ինքնության ճանաչումից և ազգային դրսևորումից բխող էքզիստենցիալ մի շարք հարցադրումների: Ըստ այդմ էլ՝ կատարվել են ուսումնասիրրություններ՝ կապված էքզիստենցիալիզմի (գոյապաշտության) փիլիսոփայության հետ, որն իր անմիջական ազդեցությունն է ունեցել այդ ժամանակաշրջանի ամերիկյան գրականության վրա: Դա է պատճառը, որ հրեա-ամերիկյան գրականությունն անընդհատ էքզիստենցիալ գոյապայքարի մեջ է և միանշանակ արծարծում է գոյաբանական գաղափարներին ու փիլիսոփայությանն առնչվող կարևորագույն հարցերը: Հրեա-ամերիկյան գրականության ինքնության պահպանման ջատագով ակնառու հեղինակներից էին Իսրայել Զանգվիլը, Արթուր Լորենցը, Նիլ Սայմոնը, Իրվին Շոուն, Ֆրանց Վերֆելը, Իսահակ Բաշևի Զինգերը, Ֆիլիպ Ռոթն ու Սոլ Բելլոուն:

Էքզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ կենտրոնական տեղ են գրավում անհատի ու հասարակության հարաբերակցության և էքզիստենցիայի ազատության հարցերը: Այս պարագայում հրեա-ամերիկյան գրականության ներկայացուցիչների գերխնդիրն էր, ինչպես նաև է, ամերիկյան հասարակության լիիրավ անդամ դառնալը՝ միաժամանակ չկորցնելով սեփական ինքնության հանդեպ ճանաչողական դեմքը: Էքզիստենցիալիզմն անհատապաշտական և սուբյեկտիվիստական փիլիսոփայություն է, որում անհատն ըմբռնվում է որպես ինքնաբավ ու բարձրագույն կեցություն: Անհատն ինքնանպատակ է, իսկ հասարակությունը՝ միջոց:

Սայմոնի պիեսներում քաղաքը պատկերվում է յուրահատուկ էներգիայով, բազմազանությամբ և տեմպով, որոնք կենսական են, այսպես կոչված, «քաղաքային կատակերգությունների» առաջացման համար: Այդպիսի պիեսների կերպարները ներկայացվում են տարբեր ներկապնակով՝ իրենց էթնիկ պատկանելությամբ, սոցիալական վիճակով, մասնագիտությամբ և այլն: Եվ հենց այս բազմազանությունն է, որ թույլ է տալիս ժանրին բացահայտելու հումորի սկզբնաղբյուրը և բախումները պիեսներում: «Քաղաքային կատակերգության» ժանրը շատ հաճախ ներառում է լայն զանգվածների և հիմնականում նրանց, ովքեր

առնչվում են քաղաքային խնդիրներին: Սա մի ժանր է, որը ներառում է կերպարների ամենօրյա ներանձնային և սոցիալական հակամարտությունները և պայքարը, որոնք քողարկվում  են երգիծանքի և հումորի ներքո:

Նշելի է, որ Նիլ Սայմոնի գրելաոճի հիմնական կողմը կատակերգությունն է՝ իրավիճակային և բանավոր հումորը, որում արծարծվում են այնպիսի լուրջ թեմաներ, որոնք հանդիսատեսին ստիպում են «ծիծաղել լաց լինելու փոխարեն»: Այդ պիեսները լի են քաղաքային միջավայրերի իրավիճակային պատումների լայն տեսականիով, որոնք արտահայտում են առօրյա կյանքի երկիմաստությունը՝ ամերիկյան ամենակուլ հասարակության մեջ ինքնությունը պահպանել ցանկացողների շրջանակներում: Ինչպես նշում է ամերիկացի խմբագիր Քիմբալ Քինգը, այդ ամենն  ստեղծում է «բարդ, քաղաքային հումոր կամ հեգնանք», և արդյունքում հայտնվում են պիեսներ, որոնք ներկայացնում են «միջին դասի Ամերիկան իր հասարակությամբ»[2]:

Նիլ Սայմոնն իր պիեսների միջոցով ստեղծում է ամենօրյա, ակնհայտորեն պարզ բախումներ՝ իրենց հետաքրքիր հանգուցալուծումներով և անակնկալ լուծումներով, որոնք դառնում են զավեշտական նախադրյալներ կամ, ավելի ճիշտ, առանց լուծումների թվացող խնդիրներ, որոնք ստանում են իրենց լուծումները կատակների և հեգնանքների նախահիմքում:

Սայմոնի գրելաոճի ինքնատիպ առանձնահատկություններից է նրա  կողմից կատակերգության և դրամայի ներդաշնակ միաձուլումը: Օրինակ՝ «*Զբոսայգում՝ ոտաբոբիկ*» պիեսը, որը թեթև ռոմանտիկ կատակերգություն է, «Plaza Suite»-ի որոշ հատվածներ գրվել են որպես «ֆարս», իսկ «Կալիֆոռնիա սյուիտի» որոշ մասեր ներկայացված են որպես «բարձր կատակերգություն»[3]: Հեղինակի գրելաոճի առանձնահատկություններից է նաև այն, որ նա  պատրաստ էր միշտ նորարարական փորձեր անել և համարձակության դիմել՝ հաճախ իր պիեսները տեղափոխելով նոր և անսպասելի ուղղություններով: Այսպես, օրինակ, իր *«Կոճապղպեղյա փիկինը»* պիեսում նա հրաշալիորեն համատեղել է կատակերգությունը ողբերգության հետ, իսկ *«Բամբասանքները»* լիամետրաժ ֆարս է: Նրա պիեսները դյուրամարս և հասու չեն ամենքին, առավելապես որոշ գրաքննադատների: Ամերիկացի գրաքննադատ Կոպրինսը, սակայն, պնդում է, որ դրանք, այնուամենայնիվ, ապացույցն են այն բանի, որ Սայմոնը կարողացել է իր պիեսներում հաջողությամբ համեմել կատակերգականն ու դրամատիկը. «Սայմոնն իր պիեսներում խառնում է լրջությունը որպես դրամատուրգ և հետաքրքրությունը՝ որպես նոր հիմքեր բացելու ճանապարհ»[4]:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

[2] Տե՛ս Kimball King, “Hollywood on Stage: Playwrights evaluate the culture Industry”, First Published in 1998. Routledge is an imprint of Taylor & Francis, p. 47.

[3] Տե՛ս Riedel, Michael (April 9, 2010). "Simon keeps “Promises"". New York Post.

[4] Koprince, Susan (2002). Understanding Neil Simon. Columbia, SC: University of South Carolina Press, p. 87

## ԵՐԳԻԾԱՆՔԻ ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼ ԵՎ ԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ՊԻԵՍՆԵՐՈՒՄ

Ատենախոսության **երկրորդ գլուխը**՝ «*Երգիծանքի կոնցեպտուալ և ժանրային դրսևորումները Նիլ Սայմոնի պիեսներում*», նվիրված է Նիլ Սայմոնի պիեսներում արտահայտված երգիծանքի կոնցեպտուալ և ժանրային առանձնահատկություններին: Այստեղ անդրադարձ է կատարվել մի շարք պիեսներում ոչ միայն երգիծանքի կիրառման և դրսևորման ձևերին, կոնցեպտուալ կառույցին, այլև որոշ գրաքննադատների աշխատանքներին, որոնք այս կամ այն կերպ իրենց նպաստն են թողել դրամատուրգի աշխատանքների գրաքննության գործում: Այդ գրաքննադատների շարքին են դասվում անգլիացի Գրոբել Լոուրենսը, ամերիկացի Քերոլ Լոուսոնը, Ջոն Լահրն ու Մակ Գովերնը և ռուս Դմիտրի Նիկոլաևը: Նշյալ գրաքննադատներն իրենց տարբեր աշխատանքներում փաստում են, որ Նիլ Սայմոնն իր ստեղծագործությունների միջոցով միաժամանակ և՛ երգիծում է իր ապրած ժամանակահատվածը, և՛ սահմանում է դրանում առկա նորամուծությունների՝ խիստ արգելքների (տաբուների) թույլատրելի աստիճանը՝ կախված մարդու հոգեկան ընկճվածությունից: Հեղինակն իր կերպարներին օժտում է ամերիկյան բարձր հասարակությանը հատուկ շքեղությամբ, ուղղամտությամբ և հստակ դիրքորոշմամբ, սակայն այդ նույն մշակույթին պատկանող ներկայացուցիչները հայտնվում են չարիքների ճիրաններում և շատ հաճախ մոռանում են իրենց ուղղամտության մասին:

Դրամատուրգի երգիծանքի մանրակրկիտ վերլուծության շնորհիվ ի հայտ են բերվում վերջինիս նրա ու յուրօրինակ մոտեցումներն իր ժամանակի բարոյահոգեբանական և հասարակական խնդիրներին, հոգեկան ու մտավոր հետամնացություն ունեցող մարդկանց զգացմունքային աշխարհին, օտարության և միայնության դրամային, նրանց ապրելու ցանկությանը և էքզիստենցիալ խնդիրներին, որոնք դարձել են տվյալ դարաշրջանի անքակտելի մասը:

Նիլ Սայմոնն իր պիեսներում տպավորիչ ու խորապես մարդկային կերպարների միջոցով ընթերցողին մղում է դեպի մարդասիրությունն ու մարդկային կեցության խորքային ըմբռնմանը: Դրամատուրգի հետմոդեռնիստական երկերում գերակշռում են աբսուրդը, երգիծանքը, որը երբեմն խայթող է, իսկ երբեմն էլ նուրբ ու զվարճալի: Անողոք երգիծանքի և զվարթաբանության ընթացքում, սակայն, պարզորոշ նկատելի են կենդանի ու խոր իրականությունը և դրան տրվող հարցերի լուծման ճանապարհները:

Աշխատության այս գլխում ընդգծվում է, որ Նիլ Սայմոնի պարագայում ևս կատարվել է այն, ինչ տեղի է ունեցել XX դարի անվանի գրողների հետ. արվեստագետն ու մտածողը կամ այս դեպքում փիլիսոփան, միախառնվում են միմյանց՝ հեղինակի համար դառնալով անբաժանելի: Այս երկու առկա կերպարներն ամփոփված են հեղինակի մեջ. դրանք գործում են միասին՝ առաջադրելով կյանքի փաստերից ընդհանրացված թեզը կամ ավելի ընդգրկուն գաղափարը:

Ինչպես կատակերգության ժանրի գրողների երկերի մեծ մասը՝ Արիստոֆանեսից մինչև Վուդի Ալեն, Նիլ Սայմոնի երգիծանքը ևս գրված է ոչ միայն ար-

տահայտելու, այլև հիմնականում լսելի դառնալու համար: Դա պարզորոշ երևում է նրա՝ ավելի քան քսան պիեսներում, որոնց թվում են *«Ե՛կ, փչի՛ր քո եղջյուրը»*, «*Զբոսայգում՝ ոտաբոբիկ*», *«Տարօրինակ զույգը»*, *«Բրայթոնի ծովափնյա եռագրություն»*, *«Երկրորդ պողոտայի բանտարկյալը»*, *«Պլազա Սյուիթ»*), *«Յոնքերսում մոլորվածները»*):

Ատենախոսության այս գլխում անդրադարձ է կատարվում նաև մի շարք պիեսներում երգիծանքի կիրառման և դրսևորման ձևերին, կոնցեպտուալ կառույցին, ինչպես նաև մի քանի գրաքննադատների աշխատանքներին, որոնք այս կամ այն կերպ կարողացել են վերծանել Նիլ Սայմոնի թատերական աշխարհը: Լավագույն քննադատությունն ու նկարագրությունը, սակայն, տվել է հենց ինքը՝ հեղինակը, Լիլիան Հելմաննի հետ հարցազրույցում: Օրինակ՝ այն հարցին, թե ինչպիսի դրամաների հեղինակ է Նիլ Սայմոնը, նա պատասխանել է, որ երբևէ չի մտածել գրել թեմատիկ դրամաներ. դրանք ստեղծվել են ինքնըստինքյան, առանց նախապես ծրագրելու և մտածելու: Հեղինակը նաև նշել է, որ բավական է եղել հայացք գցել իր դրամայի առաջին էջին, և արդեն հասկանալի կարող էր դառնալ՝ այն կիրագործվի՞, կսիրվի՞, կներկայացվի՞, թե՝ ոչ: Իսկ ամենակարևոր բանը հեղինակի համար իր կերպարների կենդանի և շնչող տեսակներն էին[5]:

Նիլ Սայմոնը նաև համարվում է աբսուրդի թատրոնի ներկայացուցիչ, որի պիեսներում առկա ուրվականներն ու ոգիներն ունենում են որոշակի դերակատարումներ: Հեղինակի գրական տիրույթը բավական ընդգրկուն է, քանի որ այնտեղ կարելի է գտնել ամեն բան՝ ֆանտաստիկ տիեզերական երևույթներից մինչև մարդկային նուրբ հոգու որոնումները: Եվ այս բոլոր ջանքերը միտված են հասկանալու և, ինչու չէ, նաև ընկալելու ժամանակակից մարդու ներաշխարհին ու ապրելակերպը: Սակայն, ըստ Նիլ Սայմոնի, մարդիկ նույն մարդիկ են, ինչպես դարեր առաջ: Պարզապես նրանք դարձել են առավել մեխանիզացված, առավել անիրական ու եսակենտրոն: Նրա թատերգություններում կարելի է տեսնել, թե ինչպես է անհատը փորձում պահպանել արժանապատվությունն ու ազատ կամքն այս աշխարհում, որը կարծես թե առաջնորդվում է մահվան և ավերման սկզբունքով:

Ատենախոսության այս գլխում նկատվում է, որ կատակերգություն կամ ողբերգություն գրելը մարտահրավեր է ցանկացած դրամատուրգի համար. քչերն ունեն այս ժանրերից որևէ մեկը լավ գրելու հմտություն: Եվ սակավ են այն թատերագիրները, որոնք հմտորեն կարող են համատեղել երկուսը նույն ստեղծագործության մեջ՝ միաժամանակ ստեղծելով ազդեցիկ գեղարվեստական ազդեցիկ պատկերներ: Պուլիցերյան մրցանակի արժանացած *«Յոնքերսում մոլորվածները»* իր գլուխգործոցում Սայմոնը կատարեց ստեղծագործական սխրանք. այն նրա ամենահայտնի պիեսներից է, որի դրամատիկ շերտերն ու կերպարների դրսևորումներն արտահայտվում են հիմնականում երգիծական քողի ներքո՝ արտահայտելով նրանց ներքին մտավախությունները, հույզերն ու ապրումները: Ի տարբերություն այլ պիեսների՝ այստեղ նկատվում է դրամատիկ և իրավիճակա-

[5] Տե՛ս https://www.theparisreview.org/interviews/1994/the-art-of-theater-no-10-neil-simon

յին երգիծանքի կամ, ավելի ճիշտ, հեգնանքի արտահայտում: Պիեսի կերպարներն ինքնին բավականին հետաքրքիր ու դրամատիկ են, հատկապես՝ տատիկը, որը Գերմանիայից փախուստի դիմած հրեա է և մշտապես կառչած է իր արմատներին: Նրա կուրությունը հեղինակի կողմից կատարված շեշտադրելի երգիծանք է, քանի որ տատիկը թեև կույր է, սակայն բոլորից լավ է տեղյակ, թե ինչ է կատարվում իր շուրջը: Նրա կույր աչքերը կարծես իր ընտանիքի աչքերն են, որոնք միշտ բաց են և ականատես են ամեն ինչի:

Երկրորդ գլխի հիմնական ամփոփումն այն է, որ հրեա-ամերիկյան գրականության ներկայցուցիչների համար երգիծանքն ու քաղաքային կատակերգության ժանրը ծառայել են որպես գոյատևման միջոց, ցավի և հաղթահարման դեղատոմս, ինչպես նաև քննադատության գործիք: Հրեական հումորը՝ հատկապես արտահայտված քաղաքային կատակերգության ժանրում, հաճախ դրսևորում է օտարականի անկայուն դիրքը՝ լինի դա ներգաղթյալ, փոքրամասնություն թե պարզապես այն անձը, որը փորձում է տեղ գտնել ամերիկյան կյանքի ներհակությունների մեջ:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
## ՀՐԵԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐԾԱՐԾՎՈՂ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՓՆՏՐՏՈՒՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ՊԻԵՍՆԵՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՎՐԱ

Աշխատանքի **երրորդ գլխում** («*Հրեա-ամերիկյան գրականության մեջ արծարծվող ինքնության ու փնփրփուքի ազդեցությունը Նիլ Սայմնի պիեսների կերպարների վրա*») վերլուծվում են Նիլ Սայմոնի գրական հերոսների ինքնության փնտրտուքի հարցադրումները՝ արտահայտված հեղինակի պիեսների կերպավորման համապատկերում: Այստեղ ներկայացվում է դրամատուրգի գլխավոր խնդիրը՝ ամերիկյան իրականության մեջ հասարակություն-անհատ կապի յուրահատկությունների բացահայտումը դրամատուրգիայի լեզվով. այն երբեմն ողողված է մեղմ ու սրամիտ հումորով, երբեմն էլ՝ քողարկված երգիծանքով: Պիեսներում պատկերված ժամանակակից ամերիկյան «հեշտ ու թեթև կյանքի» հետևում թաքնված է այդ հոգեզուրկ հասարակության պրագմատիկ, նյութապաշտ էությունը: Հեղինակը մի կողմից անդրադառնում է համամարդկային այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են մարդու օտարումը, նրա էքզիստենցիալ վախերը, գաղթյալի հոգեբանության և սեփական թերարժեքության բարդույթից ձերբազատվելու անհնարինությունը, մյուս կողմից՝ տարբեր ներգաղթաց ազգերի, այդ թվում նաև հրեաների ազգային «դիմագծի», ազգային ինքնատիպության կորստի վտանգի խնդրին, երբ տեղի է ունենում մշակութային համաձուլում:

Իր դիպաշարերում բազմահնար, դեպքերի ու դեմքերի պատկերման անսպառ, սրատես ու ճշգրիտ երանգներ որսացող հեղինակը պատմում և անգամ վերապատմում է հայրենաբաղձության, մենության, անհանգրվանության դրաման, հարազատ հոգիների և դրանց անվերջ որոնումների թեման հենց կերպարների շուրթերով: Մարդը ցավագին է տանում իր կտրվելը հարազատ բնակա-

վայրից, բարեկամներից ու ընկերներից, որն էլ անդրադառնում է նրա հոգեբանական վիճակների և կենսակերպի ձևավորման վրա:

Նիլ Սայմոնն արտահայտում է եղբայրական զգացմունքի ու կարեկցանքի, սիրո և մխիթարանքի պակասը: Նա գործարար Անգլիայի, Ամերիկայի և ուրիշ հզոր երկրների կարգ ու բարքերին, դրանց անհատամերժ, համահարթող չափանիշներին հակադրում է իր հինավուրց հայրենիքի խորհուրդը, նրա առասպելը, մարդկանց իրար ամուր կապող ավանդույթներն ու սովորույթները: Այստեղ հիշատակելի են Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» ստեղծագործության հերոսները, երբ կյանքի և պատմության հանգամանքների բերումով Ամերիկայում հայտնված հայն ու շոտլանդացին խոստովանում են, որ իրենց գոյն այնտեղ միայն ֆիզիկական է. թե՛ մտքով և թե՛ հոգով նրանք իրենց պատմական հայրենիքում են, յուրաքանչյուրը՝ իր լեռնոտ եզերքում:

Նիլ Սայմոնն իր ստեղծագործություններում կերտում է հերոսների, որոնք աշխարհի տարբեր մասերից այստեղ հայտնված, անգամ կեցության դժվարին պայմաններում իրենց մեջ կրում ու պահպանում են միանգամայն այլ պատկերացումներ, արտահայտում են հոգեկան և զգայական ուրիշ ապրումներ, իդեալներ ու երազանքներ: Այս հերոսներն ընդունակ են նայելու աշխարհին, ապրելու, գոյակցելու և շփվելու տարբեր ազգությունների ու մտածելակերպի տեր մարդկանց հետ, սակայն ամբողջովին պարզամիտ և անմիջական ձևով:

Պատկերելով Ամերիկա ներգաղթածների անցած ճանապարհը՝ դրամատուրգը մեծ կարևորություն է տալիս նաև բուն Ամերիկայի նկարագրությանը: Ըստ Սայմոնի՝ Ամերիկան, ինչ խոսք, ապաստանել է շատ այլազգիների, օթևան տվել նրանց, բայց միևնույն ժամանակ ակամա հեռացրել է այդ մարդկանց իրենց դարավոր ավանդույթներից, սովորույթներից, ինչպես նաև հոգևոր ընկալումներից:

Ինքնության փնտրտուքի և ազգային արժեքների անընդհատական նորացման ընթացքում գրողը ջանում է վերագտնել իր սեփական ձայնն ու եսը, որոնք շատ հաճախ առավել խոսուն են դառնում ներքին հակամարտությունների ժամանակ: Դրամատուրգն իր ինքնության վերաբերյալ հարցադրումներն ուղղում է համայն աշխարհում սփռված գաղթյալ ժողովուրդներին՝ դրանով իսկ միաձուլվելով նրանց:

Մեր քննության առարկա հանդիսացող պիեսների միջոցով ջանացել ենք ըստ էության ուսումնասիրել Նիլ Սայմոնի դրամատուրգիայում առաջ քաշած այդ համամարդկային խնդիրը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում, ինչպես նաև ընդհանրապես զննել ինքնության փնտրտուքի ու ներքին ազատության խնդիրների արտահայտման միջոցները, որոնք իրենց հերթին բացահայտվել և ներկայացվել են ըստ նշանակության:

Որպես մեկ այլ հատկանշական գիծ կարող ենք առանձնացնել Նիլ Սայմոնի քրտնաջան աշխատանքն արվեստանոցներում՝ պիեսները բեմադրելու և անընդհատական գրելու և վերաշարադրելու գործընթացը, որի շնորհիվ պիեսներն ստանում էին ավարտուն տեսք և անգամ արժանանում ինքնաքննադատության: Հեղինակը նախ բեմադրում էր իր պիեսները սակավ հանդիսատեսների

մասնակցությամբ՝ մինչ թատրոններին և տպագրատներին հանձնելը, և հետո շտկումներ կատարում: Նրա նպատակն էր համոզվել, որ յուրաքանչյուր պիես, իր կերպարային համակարգով հանդերձ, կարող է ծառայել ըստ նշանակության և անսխալ կերպով ներկայանալ միջազգային հանդիսատեսին: Գործնական այդ աշխատանքի շնորհիվ, որի նպատակը պիեսներն արդյունավետ ու բովանդակալից ներկայացնելն էր, դրամատուրգը հասնում էր լուրջ հաջողության՝ առանձնանալով իր ժամանակի շատ թատերագիրներից:

Նիլ Սայմոնի գրականությունը, առանց որևէ սահմանափակումների, ներկայացնում է ամերիկյան ժամանակակից թատրոնի նշանակալի ձեռքբերումները: Երգիծանքի և առօրյա կյանքի աբսուրդի միավորումը, ինչպես նաև երկխոսությունների կատարյալ համադրումները նրա պիեսներ վաղուց ճանաչելի են դարձրել հեղինակի անունը աշխարհի տարբեր երկրներում:

**Ամփոփելով** կարող ենք եզրակացնել, որ Նիլ Սայմոնը կանխորոշում է XX դարի մարդու կարոտի «ծարավը» սովորական փոխհարաբերությունների ու շփումների, մարդկային բնական կարեկցանքի ու մխիթարանքի համար: Նա իր երկերում օգտագործում է նաև ֆանտաստիկ և անիրական տարրեր՝ մատնանշելու համար ոչ միայն ժամանակակից մարդու ներաշխարհի ոչնչացումը, այլև ընտանեկան հարաբերությունների փոխակերպումն իբրև արհեստածին շփումների: Արյունակցական կապերը, ցավոք, այլևս արդիական և սերտ չեն, մինչդեռ արհեստական հարաբերությունների միջոցով, թվում է, հնարավոր է բարեկամություն ստեղծել:

